ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 14.01.2026 ԹՎԱԿԱՆԻ՝ ՓԱՍՏԱԲԱՆ ԼԻԼԻԹ ԼԻՊԱՐԻՏԻ ՄԱՆՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ ԿԳ-25084-2-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը (**այսուհետև՝ Խորհուրդ**) Էմին Բեգլարյանի՝ նախագահությամբ խորհրդի անդամներ՝ Մարինե Ֆարմանյանի, Պավել Գյուլումյանի, Արսեն Հարությունյանի, Վարազդատ Հարությունյանի, Լիլիթ Ղազանչյանի, Դավիթ Վարդիկյանի, Դավիթ Մելքոնյանի և Ռոման Ահարոնյանի.

գրավոր ընթացակարգով քննության առնելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 14.01.2026 թվականի թիվ ԿԳ-25084-2-Ա որոշման դեմ փաստաբան Լիլիթ Լիպարիտի Մանյանի կողմից ներկայացված բողոքը,

ՊԱՐԶԵՑ՝

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

Գրիգոր Գրիգորյանը **(այսուհետև՝ Դիմող),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետև՝ Պալատ),** հայտնել է, որ ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԿԴ/0902/02/24 քաղաքացիական գործով հանդիսանում է հայցվոր, միաժամանակ հակընդդեմ հայցով պատասխանող:

Դիմողը հայտնել է, որ մինչև նշված քաղաքացիական գործով դատարան դիմելը իրավաբանական օգնություն ստանալու նպատակով դիմել է փաստաբան Լիլիթ Լիպարիտի Մանյանին, որի հետ կնքել է իրավաբանական օգնություն ցույց տալու

պայմանագիր: Դիմողի պնդմամբ՝ Փաստաբանը ծանոթացել է իր իրավիճակին, տրամադրել է իրավական խորհրդատվություն, իսկ հետագայում նույն քաղաքացիական գործով հանդես է եկել իր դատավարական հակառակորդների ներկայացուցիչ:

Դիմողը նշել է, որ Փաստաբանն իրավունք չուներ նույն գործով ներկայացնել իր դատավարական հակառակորդների շահերը, քանի որ ինքը դիմել էր նույն Փաստաբանին իրավաբանական օգնություն ստանալու նպատակով, իսկ վերջինս տեղյակ էր իր իրավական խնդրին:

Փաստաբան Լիլիթ Մանյանը (**այսուհետև նաև՝ Փաստաբան կամ Բողոքաբեր**) ներկայացրած բացատրություններով հայտնել է, որ Դիմողին տրամադրել է միայն ընդհանուր բանավոր խորհրդատվություն՝ ժառանգության ընդունման կարգի վերաբերյալ, սակայն Դիմողը չի վճարել պայմանագրի գումարը, չի տրամադրել փաստաթղթեր, լիազորագիր չի տվել, իսկ ինքը Դիմողի շահերին ուղղված որևէ դատավարական կամ այլ իրավաբանական գործողություն չի կատարել:

Փաստաբանը նաև նշել է, որ իր կողմից հետագայում վարած թիվ ԿԴ/0902/02/24 քաղաքացիական գործը վերաբերում է ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչմանը, այսինքն՝ այն, ըստ Փաստաբանի, առնչություն չունի Գրիգոր Գրիգորյանի հետ նախապես քննարկված ժառանգության հարցի հետ:

Պալատի նախագահի 01.11.2025 թվականի թիվ 290-Ա/ԿԳ-25084 որոշմամբ փաստաբան Լիլիթ Լիպարիտի Մանյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետև նաև՝ Օրենք)** 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «ա» ենթակետի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 3.2.7 ենթակետի խախտման հատկանիշներով:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը (**այսուհետև նաև՝ Հանձնաժողով**), 14.01.2026 թվականին քննության առնելով փաստաբան Լիլիթ Լիպարիտի Մանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, որոշել է Փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «խիստ նկատողություն», ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ 6 ամսվա ընթացքում պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 6 ակադեմիական ժամ ժամաքանակով:

2. **<u>ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի</u>** <u>14.01.2026 **թվականի թիվ ԿԳ**-25084-2-**Ա որոշման էությունը**.</u>

Հանձնաժողովի որոշմամբ արձանագրվել է, որ Փաստաբան Լիլիթ Մանյանի և Գրիգոր Գրիգորյանի միջև կնքվել է իրավաբանական օգնություն ցույց տալու պայմանագիր, որի

համաձայն՝ Փաստաբանը պարտավորվել է իրականացնել ներկայացուցչություն դատարանում:

Հանձնաժողովը հաստատված է համարել նաև, որ Փաստաբանը Գրիգոր Գրիգորյանին տրամադրել է իրավական խորհրդատվություն, իսկ կողմերի միջև կնքված պայմանագիրը չի լուծվել:

Միաժամանակ Հանձնաժողովն արձանագրել է, որ Գրիգոր Գրիգորյանը հանդիսանում է թիվ ԿԴ/0902/02/24 քաղաքացիական գործով հայցվոր և հակընդդեմ հայցով պատասխանող, իսկ Փաստաբան Լիլիթ Մանյանը նույն գործով հանդիսանում է Գրիգոր Գրիգորյանի դատավարական հակառակորդների ներկայացուցիչը:

Հանձնաժողովը գտել է, որ նման պայմաններում Փաստաբանի վարքագծում առկա են «Փաստաբանության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «ա» ենթակետի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.2.7 ենթակետի խախտման հատկանիշներ, քանի որ Փաստաբանը, ունենալով չդադարեցված պայմանագրային հարաբերություն Գրիգոր Գրիգորյանի հետ, հետագայում նույն դատական գործով ներկայացրել է վերջինիս դատավարական հակառակորդների շահերը և, իմանալով այդ հանգամանքի մասին, չի դադարեցրել ներկայացուցչությունը:

3. **<u>Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը</u>**.

Փաստաբան Լիլիթ Մանյանը, համաձայն չլինելով Հանձնաժողովի որոշման հետ, բողոք է ներկայացրել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդ՝ խնդրելով անվավեր ճանաչել ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 14.01.2026 թվականի թիվ ԿԳ-25084 որոշումը (**այսուհետև՝ Որոշում**)՝ իրեն կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասով:

Բողոքաբերը, ըստ էության, պնդել է, որ Հանձնաժողովի որոշումը կայացվել է օրենքի սխալ մեկնաբանմամբ և գործի փաստական հանգամանքների ոչ ճիշտ գնահատմամբ:

Մասնավորապես, Բողոքաբերը նշել է, որ Գրիգոր Գրիգորյանի հետ քննարկված հարցը վերաբերել է բացառապես ժառանգության ընդունման կարգին, մինչդեռ թիվ ԿԴ/0902/02/24 քաղաքացիական գործը վերաբերում է ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչմանը: Ըստ Բողոքաբերի՝ նշված հարաբերությունները իրավական տարբեր ինստիտուտներ են, ունեն տարբեր իրավական հիմքեր, տարբեր փաստական կազմ և վերաբերում են տարբեր գույքային միավորների:

Բողոքաբերը նաև վկայակոչել է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.2.2 ենթակետը՝ պնդելով, որ շահերի բախում առկա չէ, քանի որ Գրիգոր Գրիգորյանի հետ քննարկված հարցը և հետագայում վարված քաղաքացիական գործը չեն հանդիսանում

նույն կամ նմանատիպ հարցեր:

Բողոքաբերը նշել է, որ Գրիգոր Գրիգորյանի կողմից իրեն չի տրամադրվել որևէ փաստաթուղթ, լիազորագիր կամ այնպիսի գաղտնի տեղեկություն, որը հետագայում կարող էր օգտագործվել վերջինիս դեմ: Ըստ Բողոքաբերի՝ միայն ընդհանուր բնույթի բանավոր խորհրդատվությունը չի կարող դիտարկվել որպես այնպիսի փաստաբանական հարաբերություն, որը կբացառեր հետագայում այլ անձանց շահերի ներկայացումը:

Բողոքաբերը պնդել է նաև, որ Գրիգոր Գրիգորյանը երկար ժամանակ մասնակցել է դատական նիստերին, տեղյակ է եղել, որ Լիլիթ Մանյանը հանդես է գալիս իր դատավարական հակառակորդների ներկայացուցիչ, սակայն այդ ընթացքում որևէ առարկություն կամ բացարկ չի ներկայացրել: Ըստ Բողոքաբերի՝ բողոքը ներկայացվել է միայն դատական ակտի հրապարակման փուլում, ինչը վկայում է իրավունքի չարաշահման մասին:

Բողոքաբերը նաև նշել է, որ Հանձնաժողովը պատշաճ գնահատական չի տվել իր կողմից ներկայացված ձայնագրությանը և WhatsApp հաղորդագրություններին, որոնցով, ըստ Բողոքաբերի, հաստատվում է, որ Գրիգոր Գրիգորյանը փաստացի դադարեցրել է համագործակցությունը, չի վճարել պայմանագրի գինը, չի ներկայացրել փաստաթղթեր և չի տրամադրել լիազորագիր:

4. **<u>Դիմողի համառոտ դիրքորոշումը</u>**.

Դիմողից բացատրություն չի պահանջվել:

5. **<u>Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները</u>**.

Ներկայացված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Փաստաբան Լիլիթ Մանյանի և Գրիգոր Գրիգորյանի միջև կնքվել է իրավաբանական օգնություն ցույց տալու պայմանագիր: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի միջև 30.03.2024թ. իրավաբանական օգնություն ցույց տալու պայմանագրով* ***(այսուհետև՝ Պայմանագիր):***

2. Պայմանագրի համաձայն՝ Փաստաբանը պարտավորվել է իրականացնել ներկայացուցչություն դատարանում: *Սույն փաստը հաստատվում է Պայմանագրի 1.2 կետով:*

3. Փաստաբանը Գրիգոր Գրիգորյանին տրամադրել է խորհրդատվություն: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ:*

4. Կողմերի միջև կնքված իրավաբանական օգնություն ցույց տալու պայմանագիրը չի լուծվել: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրությամբ:*

5. Գրիգոր Գրիգորյանը հանդիսանում է թիվ ԿԴ/0902/02/24 քաղաքացիական գործով հայցվոր և հակընդդեմ հայցով պատասխանող: *Սույն փաստը հաստատվում է թիվ ԿԴ/0902/02/24 քաղաքացիական գործի վերաբերյալ «Datalex» դատական տեղեկատվական համակարգում առկա տվյալներով:*

6. Փաստաբան Լիլիթ Մանյանը թիվ ԿԴ/0902/02/24 քաղաքացիական գործով հանդիսացել է Գրիգոր Գրիգորյանի դատավարական հակառակորդների ներկայացուցիչը: *Սույն փաստը հաստատվում է թիվ ԿԴ/0902/02/24 քաղաքացիական գործի վերաբերյալ «Datalex» դատական տեղեկատվական համակարգում առկա տվյալներով:*

7. Փաստաբանը կարգապահական վարույթի շրջանակում չի ժխտել, որ դատական գործի ընթացքում իրեն հայտնի է դարձել, որ դատավարական հակառակ կողմը իրեն դիմած և իր հետ պայմանագիր կնքած անձն է:

6. **Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը**.

Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի որոշումը պետք է թողնել անփոփոխ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 39.11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *բողոքի քննության ժամանակ* ***խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում****:*

Օրենքի 39.11-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ *բողոքի քննությունից հետո խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.*

1) կարգապահական հանձնաժողովի որոշումն անփոփոխ թողնելու մասին.

2) կարգապահական հանձնաժողովի որոշումն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելու մասին:

Խորհուրդը, ուսումնասիրելով բողոքը, Հանձնաժողովի որոշումը, կարգապահական գործի նյութերը, գտնում է, որ բողոքը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն դեպքում Բողոքաբերը, ըստ էության, վիճարկում է Հանձնաժողովի այն եզրահանգումը, որ Փաստաբանի կողմից նույն դատական գործով Գրիգոր Գրիգորյանի դատավարական հակառակորդների շահերը ներկայացնելը, Գրիգոր Գրիգորյանի հետ կնքված իրավաբանական օգնություն ցույց տալու պայմանագրի պայմաններում, հանգեցրել է Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «ա» ենթակետի և Կանոնագրքի 3.2.7 ենթակետի խախտման:

Բողոքաբերի հիմնական փաստարկը կառուցված է այն դիրքորոշման վրա, որ Գրիգոր Գրիգորյանի հետ քննարկված հարցը վերաբերել է ժառանգության ընդունման կարգին, իսկ հետագայում իր կողմից վարված դատական գործը՝ ձեռքբերման

վաղեմության ուժով սեփականության իրավունքի ճանաչմանը, հետևաբար դրանք նույն կամ նմանատիպ հարցեր չեն:

Խորհուրդը հարկ է համարում նախ արձանագրել, որ Բողոքաբերը, վկայակոչելով Կանոնագրքի 3.2.2 ենթակետը և պնդելով այդ ենթակետի պայմանների բացակայությունը, Հանձնաժողովին ըստ էության վերագրում է այնպիսի իրավական գնահատական, որը Հանձնաժողովի կողմից չի կատարվել: Հանձնաժողովի որոշմամբ Փաստաբանը նշված ենթակետի խախտման համար կարգապահական պատասխանատվության չի ենթարկվել: Հանձնաժողովի որոշման իրավական հիմք են հանդիսացել «Փաստաբանության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «ա» ենթակետը և Կանոնագրքի 3.2.7 ենթակետը:

Հետևաբար Կանոնագրքի 3.2.2 ենթակետի կիրառելիության կամ դրա պայմանների բացակայության վերաբերյալ Բողոքաբերի փաստարկները չեն վերաբերում Հանձնաժողովի կողմից տրված իրավական որակմանը և չեն կարող դիտարկվել որպես Որոշումը վերացնելու հիմք: Խորհուրդը բողոքի քննության շրջանակում գնահատում է միայն այն, թե արդյոք Հանձնաժողովը բողոքում ներկայացված փաստարկների սահմաններում իրավաչափորեն է արձանագրել Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «ա» ենթակետի և Կանոնագրքի 3.2.7 ենթակետի խախտման առկայությունը:

«Փաստաբանության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է ցույց չտալ իրավաբանական օգնություն, երբ առկա է հակասություն նույն հարցով իր կամ իր վստահորդների շահերի միջև:

Կանոնագրքի 3.2.7 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պետք է դադարեցնի գործել երկուսի կամ բոլոր շահագրգիռ կողմերի օգտին, երբ վստահորդների միջև ծագում է շահերի հակասություն և երբ առկա է վստահված գաղտնիքի բացահայտման վտանգ կամ երբ փաստաբանի անկախությունը կարող է սահմանափակվել:

Տվյալ դեպքում Հանձնաժողովի որոշման հիմքում դրվել է ոչ թե միայն այն հանգամանքը, թե խորհրդատվության իրավական թեման և հետագա դատական գործի իրավական հիմքը համընկնում են, թե ոչ, այլ այն, որ Փաստաբանի և Գրիգոր Գրիգորյանի միջև առկա է եղել իրավաբանական օգնություն ցույց տալու պայմանագիր, այդ պայմանագիրը չի լուծվել, Փաստաբանը Գրիգոր Գրիգորյանին տրամադրել է իրավական խորհրդատվություն, իսկ հետագայում նույն դատական գործով ներկայացրել է վերջինիս դատավարական հակառակորդների շահերը:

Այս պայմաններում բողոքի այն փաստարկը, որ սկզբնական խորհրդատվությունը վերաբերել է ժառանգության ընդունման կարգին, իսկ հետագա դատական գործը՝ ձեռքբերման վաղեմությանը, որևէ նշանակություն չունի Հանձնաժողովի կողմից

արձանագրված շահերի հակասությունը, քանի որ Հանձնաժողովի գնահատման առանցքը եղել է չդադարեցված պայմանագրային հարաբերության առկայության պայմաններում տվյալ անձի դատավարական հակառակորդների շահերի ներկայացումը:

Խորհուրդը գտնում է նաև, որ Բողոքաբերի այն պնդումը, թե Գրիգոր Գրիգորյանի կողմից իրեն չի տրամադրվել լիազորագիր, փաստաթուղթ կամ գաղտնի տեղեկություն, չի վկայում փաստաբան-վստահորդ հարաբերությունների բացակայության մասին:

«Փաստաբանության մասին» օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանական գործունեությունը ներառում է նաև խորհրդատվությունը, ներառյալ՝ վստահորդներին նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելը, ինչպես նաև ներկայացուցչությունը դատարանում: Հետևաբար փաստաբանական գործունեությունը չի սահմանափակվում միայն դատարանում ներկայացուցչությամբ կամ լիազորագրի առկայությամբ: խորհրդատվության տրամադրումը նույնպես փաստաբանական գործունեության ձև է: Ավելին, Հանձնաժողովի կողմից հաստատված է համարվել, որ կողմերի միջև կնքված իրավաբանական օգնություն ցույց տալու պայմանագրի առարկան եղել է դատարանում ներկայացուցչություն իրականացնելը:

Անդրադառնալով Բողոքաբերի այն փաստարկին, որ Գրիգոր Գրիգորյանի հետ փաստացի համագործակցությունը չի շարունակվել, վերջինս չի վճարել պայմանագրի գումարը, չի տրամադրել փաստաթղթեր և լիազորագիր, Խորհուրդը արձանագրում է, որ նշված հանգամանքները ինքնին չեն կարող վկայել իրավաբանական օգնություն ցույց տալու պայմանագրի դադարման կամ դրանով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտի մասին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում և կողմերի համար պարտադիր է դառնում կնքելու պահից, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը, որում բացակայում է պայմանագրի գործողության ժամկետի ավարտով պարտավորությունների դադարման վերաբերյալ պայմանը, գործում է մինչև դրանով որոշված պարտավորության կատարման ավարտը:

Տվյալ դեպքում կողմերի միջև կնքված իրավաբանական օգնություն ցույց տալու պայմանագրով հատուկ սահմանվել է այն պահը, երբ Փաստաբանի պարտավորությունները համարվում են կատարված: Մասնավորապես՝ պայմանագրով նախատեսվել է, որ կողմերի համաձայնությամբ սույն պայմանագրի շրջանակներում Փաստաբանի պարտավորությունները համարվում են կատարված վերջինիս կողմից հանձնարարողին ստորագրման նպատակով ներկայացված հանձնման-ընդունման ակտը հանձնարարողի կողմից ստորագրելու օրվանից կամ սույն պայմանագրի առարկան

կազմող հանձնարարության վերաբերյալ գործով ըստ էության լուծող դատական ակտի կայացման օրվան հաջորդող տասնմեկերորդ օրվանից:

Նշված պայմանագրային դրույթից հետևում է, որ կողմերը պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարումն ավարտված համարելու համար նախատեսել են կոնկրետ պայմաններ: Մինչդեռ Բողոքաբերի կողմից չի ներկայացվել այնպիսի ապացույց, որը կհաստատեր, որ հանձնարարության ակտը ստորագրվել է, կամ պայմանագրի առարկան կազմող հանձնարարության վերաբերյալ գործով կայացվել է ըստ էության լուծող դատական ակտ, որի հիմքով Փաստաբանի պարտավորությունները կարող էին համարվել կատարված: Ավելին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի փոփոխման կամ լուծման համաձայնությունը կնքվում է այն ձևով, ինչով պայմանագիրը, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պայմանագրից կամ գործարար շրջանառության սովորույթներից: Տվյալ դեպքում չի հաստատվել, որ կողմերի միջև կնքված պայմանագիրը դադարել է օրենքով, պայմանագրով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված կարգով:

Խորհուրդը հարկ է համարում նաև նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 780-րդ հոդվածը պատվիրատուին վերապահում է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիրը կատարելուց հրաժարվելու իրավունք՝ կատարողի փաստացի կատարած ծախսերը վճարելու պայմանով: Միաժամանակ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով պայմանագիրը համարվում է լուծված կամ փոփոխված այն դեպքում, երբ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ և այդ հրաժարվելու իրավունքը փաստացի իրացվել է: Մինչդեռ Բողոքաբերի կողմից չի հիմնավորվել ո՛չ հանձնման-ընդունման ակտը հանձնարարողի կողմից ստորագրման, ո՛չ պայմանագրի առարկա հանձնարարության վերաբերյալ ըստ էության լուծող դատական ակտի կայացման, ո՛չ էլ պայմանագրից հրաժարվելու իրավունքի իրացման փաստը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Խորհուրդը գտնում է, որ Բողոքաբերի նշված փաստարկները չեն հերքում Հանձնաժողովի այն եզրահանգումը, որ Փաստաբանի և Գրիգոր Գրիգորյանի միջև կնքված իրավաբանական օգնություն ցույց տալու պայմանագրի դադարումը կամ դրանով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը գործի նյութերով չի հաստատվել:

Այս համատեքստում՝ Խորհուրդը հարկ է համարում նաև արձանագրել, որ Բողոքաբերը, լինելով փաստաբան և պայմանագրային հարաբերությունների իրավական հետևանքների վերաբերյալ մասնագիտական գիտելիքներ ունեցող անձ, չէր կարող պայմանագրային հարաբերության դադարումը թողնել ենթադրությունների մակարդակում: Եթե Բողոքաբերը գտնում էր, որ Գրիգոր Գրիգորյանի կողմից լիազորագիր

չտրամադրելը, պայմանագրի գումարը չվճարելը վկայում են իրավաբանական օգնություն ցույց տալու պայմանագրից հրաժարվելու մասին, ապա այդ հանգամանքը ենթակա էր օրենքով սահմանված կարգով պատշաճ արձանագրման:

Անդրադառնալով Բողոքաբերի այն փաստարկին, որ Գրիգոր Գրիգորյանը երկար ժամանակ մասնակցել է դատական նիստերին և առարկություն չի ներկայացրել, Խորհուրդը արձանագրում է, որ տվյալ հանգամանքը որևէ նշանակություն չունի Փաստաբանի մասնագիտական վարքագծի գնահատման հետ: Կարգապահական վարույթի շրջանակում քննարկման առարկան Փաստաբանի վարքագիծն է, այլ ոչ թե Դիմողի կողմից դատական գործի ընթացքում առարկություն ներկայացնելու կամ չներկայացնելու հարցը:

Եթե Փաստաբանին հայտնի է դարձել, որ իր կողմից ներկայացվող կողմերի դատավարական հակառակորդը իրեն դիմած և իր հետ իրավաբանական օգնություն ցույց տալու պայմանագիր կնքած անձն է, ապա հենց այդ պահից Փաստաբանը պարտավոր էր գնահատել շահերի հակասության հնարավորությունը և ձեռնարկել Կանոնագրքով նախատեսված պատշաճ վարքագիծ: Դիմողի կողմից ուշ բողոք ներկայացնելը չի կարող ինքնին օրինականացնել փաստաբանի այն վարքագիծը, որը Հանձնաժողովի կողմից գնահատվել է որպես շահերի հակասության պայմաններում կատարված վարքագիծ:

Ինչ վերաբերում է Բողոքաբերի այն պնդմանը, որ Հանձնաժողովը պատշաճ չի գնահատել իր կողմից ներկայացված WhatsApp հաղորդագրությունները և ձայնագրությունը, ապա Խորհուրդը գտնում է, որ նշված փաստարկը նույնպես չի կարող հիմք հանդիսանալ Հանձնաժողովի որոշումը վերացնելու համար:

Նշված ապացույցները, Բողոքաբերի ներկայացմամբ, վերաբերում են այն հանգամանքին, որ Գրիգոր Գրիգորյանը չի շարունակել համագործակցությունը, չի վճարել պայմանագրի գումարը, չի տրամադրել փաստաթղթեր և չի տվել լիազորագիր: Սակայն այդ հանգամանքները, նույնիսկ ընդունվելու դեպքում, չեն հերքում Հանձնաժողովի որոշմամբ հաստատված այն հիմնական փաստերը, որ կողմերի միջև կնքվել է պայմանագիր, իրավական խորհրդատվություն տրամադրվել է, պայմանագիրը չի լուծվել, իսկ Փաստաբանը հետագայում նույն դատական գործով ներկայացրել է Գրիգոր Գրիգորյանի դատավարական հակառակորդների շահերը:

Խորհուրդը հարկ է համարում նաև արձանագրել, որ Կանոնագրքի 3.2.7 ենթակետի նպատակն է կանխել այնպիսի իրավիճակները, երբ փաստաբանը հայտնվում է իր վստահորդների կամ իր կողմից ներկայացվող շահագրգիռ կողմերի հակադիր շահերի միջև, ինչի հետևանքով կարող է վտանգվել փաստաբանի անկախությունը:

Տվյալ նորմի կիրառման համար էական է ոչ միայն այն, թե արդյոք փաստացի բացահայտվել կամ օգտագործվել է վստահված գաղտնիք, այլ նաև այն, թե արդյոք

ստեղծվել է շահերի այնպիսի հակասության իրավիճակ, որի պայմաններում փաստաբանի հետագա մասնակցությունը կարող է օբյեկտիվորեն կասկածի տակ դնել նրա անկախությունը:

Սույն գործով Հանձնաժողովը հաստատված է համարել, որ Գրիգոր Գրիգորյանի և Փաստաբանի միջև առկա է եղել իրավաբանական օգնություն ցույց տալու պայմանագիր, պայմանագիրը չի լուծվել, Փաստաբանը Դիմողին տրամադրել է իրավական խորհրդատվություն, իսկ հետագայում նույն դատական գործով հանդես է եկել Դիմողի դատավարական հակառակորդների ներկայացուցիչ: Այսինքն՝ Փաստաբանը հայտնվել է այնպիսի իրավիճակում, երբ նույն դատական վեճի շրջանակում առկա են եղել միմյանց հակադիր գույքային շահեր ունեցող անձանց հետ կապված մասնագիտական պարտականություններ:

Նման պայմաններում շահերի հակասությունը բխել է հենց նույն դատական գործի էությունից, որտեղ մեկ կողմի պահանջի բավարարումը կարող էր հանգեցնել մյուս կողմի գույքային շահի սահմանափակման:

Հետևաբար Բողոքաբերի այն փաստարկը, որ չի ապացուցվել վստահված գաղտնիքի բացահայտում կամ օգտագործում, չի կարող հիմք հանդիսանալ Հանձնաժողովի որոշումը վերացնելու համար, քանի որ սույն դեպքում Հանձնաժողովը Փաստաբանի խախտումը չի պայմանավորել գաղտնիքի փաստացի բացահայտմամբ կամ օգտագործմամբ: Խախտման հիմքում դրվել է այն, որ Փաստաբանի և Գրիգոր Գրիգորյանի միջև կնքված իրավաբանական օգնություն ցույց տալու պայմանագրի պատշաճ կարգով լուծված լինելու հանգամանքը չի հաստատվել, իսկ Փաստաբանը նույն դատական գործով ներկայացրել է Գրիգոր Գրիգորյանի դատավարական հակառակորդների շահերը:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 14.01.2026 թվականի թիվ ԿԳ-25084-2-Ա որոշմամբ թույլ չի տրվել որևէ նորմի խախտում, ուստի **<u>Բողոքաբերի փաստարկները հերքվել են Որոշման պատճառաբանություններով և եզրահանգումներով:</u>**

Հիմք ընդունելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ Բողոքում ներկայացված չէ որևէ հիմնավորում «Փաստաբանության մասին» օրենքի 39.11-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետով Որոշումը վերացնելու համար, ուստի՝ այն պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 20-րդ կետի, 39.11-**րդ հոդվածի** 8-**րդ մասի** 1-**ին կետի և ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության** 16.26-**րդ կետի պահանջներով**, **Խորհուրդը**՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 14.01.2026 թվականի «Փաստաբան Լիլիթ Լիպարիտի Մանյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» թիվ ԿԳ-25084-2-Ա որոշման դեմ Լիլիթ Լիպարիտի Մանյանի կողմից 20.04.2026 թվականին ներկայացված բողոքը մերժել:

2. Անփոփոխ թողնել ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 14.01.2026 թվականի թիվ ԿԳ-25084-2-Ա որոշումը:

3. Հանձնարարել Խորհրդի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Էմին Բեգլարյան**

20 մայիսի 2026թ.
թիվ ԿԳ/10-Ա
ք. Երևան